ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

1915 Թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՌԱՆԸ ՀՂՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Նորաճայտ փաստաթուղթ)

Սրանից մի քանի տարի առաջ, երբ ուսումնասիրում էինք Երևանի Արվեստի և գրականության թանգարանում պահվող Գրիգոր Զոհրապի ձեռագրային ֆոնդը, օսմաներեն գրությունների մեջ (հին արաբատառ թուրքերեն) մեր ուշադրությունը գրավեց Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից Բարձրագույն Դռանը ուղղված մի ուղերձ (takrir)։

Այն բաղկացած է 7 էջից, լուսանցքներում կան որոշ ուղղումներ, իսկ վերջում խմբագրական հետևյալ դիտողությունը, տարեթիվ և Գրիգոր Զոհրապի ստորագրությունը։

«Կացությունը կարգավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն հայերի, այլև այդ շրջանում բնակվող մյուս հայրենակիցների բարոբության և երջանկության երաշխավորումը հավասարապես։

Զոհրապ (13) 31 (1915 թ.)

Մեղ հայտնի է, որ սովորաբար նման բարձրաոճ բնույթի պաշտոնական գրությունները նախքան Բարձրագույն Դուռ ուղարկելը մի վերջին անգամ նայվում և խմբագրվում էր Գրիգոր Զոհրապի կողմից, քանի որ նա գերազանց տիրապետում էր օսմաներեն լեզվին։

Ուղերձի բնագիրը բավականին դժվարությամբ վերծանելուց և ընթերցելուց հետո պարզվեց, որ այն գրված է մեծ եղեռնի նախաշեմին (այդ է վկայում նաև Գրիգոր Զոհրապի կողմից նշված տարեթիվը)։ Տվյալ ժամանակ պատրիարքարանը նկատի ունենալով

հայության օրհասական ծանր կացությունը դիմում է Բարձրագույն Դռանը կանխելու համար սպասվող ահավոր վտանգը։

Նշենք, որ այդ ծանր տագնապալի օրերին պատրիարքարանը թուրքական կառավարությանն է հղել մի այլ համառոտ շարադրված գրություն ևս։ Իր հերթին Գրիգոր Զոհրապը բուռն ջանքեր է գործադրել կանխելու արևմտահայության վրա ծանրացած մեծ վտանգը։ Նա անձամբ տեսակցել և խնդրագրեր է ներկայացրել երիտթուրքական ղեկավար գործիչներին՝ կանխելու համար հայերի ղանգվածային կոտորածները։ Գրիգոր Զոհրապի կողմից գրված այդ պաշտոնական գրություններից մի քանիսը մենք թարգմանել և հրատարակել ենք «Գրիգոր Զոհրապի՝ հայոց եղեռնը կանխելու վերջին հիգերը» խորագրով հոդվածում[1]։

Արխիվային հրատարակություններում վերոհիշյալ պատրիարքարանի կողմից Բարձրագույն Դռանը հղված ուղերձի թարգմանությանը մենք չենք հանդիպել։ Այնպես որ ուղերձի ամբողջական թարգմանությունը անհրաժեշտ ծանոթագրություններով հայ ընթերցողին է ներկայացվում առաջին անգամ։

Մենք համոզված ենք, որ սույն գրության մաքրագրված օրինակը պետք է գտնվի Թուրքիայի պետական արխիվներում։

Բնականաբար ուղերձը մեկնաբանության կարիք չունի, որովհետև բովանդակությունից կարելի է կռահել թե այդ ժամանակ ինչպիսի ահավոր վտանգի առաջ է կանգնած եղել արևմտահայությունը։ Այդ տեսակետից սույն գրությունը հույժ կարևոր է և հրատապ, քանի որ մեր օրերում թուրքական պատմագրությունը և պետական գործիչները աշխատում են ամեն կերպ խեղաթյուրել և աղավաղել 1915 թ. հայերի ցեղասպանությունը։

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԵՊԱՐԳՈՍՈՒԹՅԱՆ[2] ԱՂՈԹՈՂԻՍ ԽՆԴՐԱՆՔԸ

Հայերով բնակեցված օսմանյան նահանգներից եկող լուրերը ցույց են տալիս, որ կյանքի, ունեցվածքի և պատվի ապահովությունը վերացել է, և վտանգավոր իրավիճակը գնալով առ ավելի վատթարացել։ Այս առթիվ Պատրիարքարանի կողմից Բարձրագույն Դռանը ուղղված խնդրագրերը[3] մի գործնական արդյունք չեն տվել. և նույնիսկ այս վերջին օրերին կանգնած ենք մի նոր վրահաս վտանգի վախի առաջ։ Դարերից ի վեր իմ հավատացյալ աղղին ա-

վանդական էր դարձել տևապես հանդես բերելու իր հավատարմությունը բարձր սուլթանությանը։ Ուստի, կրկին անհրաժեշտ ենք գտնում Զերդ վսեմ վեզիրության ուշադրությունը բևեռել հետևյալին։

Զերդ վսեմափայլ վեզիրությանը հայտնի է, թե նախկին վեհապետի[4] ժամանակ ինչպիսի անտեղի կեղեքման ենթարկվեց իմ պատրիարքության[5] հովանու տակ գտնվող հայ ժողովուրդը։

Ամբողջ աշխարհին հայտնի է և ճշմարտություն, որ սահմանադրության[6] հռչակումով իմ հավատացյալ ժողովուրդը ինչպիսի գործնական նվիրվածություն է հանդես բերել կառավարության ամեն մի նախաձեռնությունը կյանքի կոչելու խնդրում, և ինչ աստիճանի ջանքեր է գործադրել մահմեդական ազգերի հետ կապերը ամրացնելու և եղբայրությունը պահպանելու համար։

Պատգամավորների մեջլիսի[7] բացման ընթացքում հայերի պահանջով է կիրառվել զինվորական ծառայությունը։ Իսկ ներկա պատերազմում հրամանատարների զեկուցագրերով ևս հաստատվում է, թե հայերը հայրենիքի համար իրենց զինվորական պարտքը ինչպիսի անձնվիրությամբ են կատարել և շատերն էլ ինչպիսի մարտիրոսությամբ զոհվել։

Բոլոր գործերի դյուրացման խնդրում հայ ժողովուրդը իր նը-դաստը բերելով՝ ամենայն ճշմարտությամբ կատարել է իր բոլոր պարտականությունները։

Հայ ժողովուրդը չափազանց վշտացած է օսմանյան պետության և ժողովրդի գլխին եկած այս աղետից[8] և պատրաստ է կատարելու հայրենիքի ապահովության և փրկության համար իր վրա ընկած կարևոր պարտականությունները։ Այդ ուղղությամբ կառավարության ձեռնարկած նախաձեռնությունները կատարելով հանդերձ, մի կողմից հայերով բնակեցված օսմանյան նահանգներում հնուց ի վեր գոյատևող անապահովության հարցը պատերազմի թոհուբոհի ընթացքում անուշադրության մատնելը, մյուս կողմից, հայերի կամքից անկախ պատճառներով մահմեդական զգացումների գրգռիչ դրսևորումները հանգեցրել են շատ նուրբ և վերին աստիճանի վտանգավոր մի կացության, և նույնիսկ պատրիարքարան հասնող վերջին գրություններում և հեռագրերում մատնանշվում են մի շարք վայրերում տեղի ունեցած կոտորածների մասին։

Այս խնդրի վերաբերյալ տարբեր ժամանակներում Բարձրա-

գույն Դռանը հղված թաքրիրների ամփոփագրերը ներկայացվել են նաև Ձերդ վսեմ վեզիրության ապավինությանը։

Այս մղձավանջային պահին ժողովուրդն էլ սխալ մեկնաբանություններին հավատք ընծայելով՝ կասկածի տակ է առնում իր հայ հայրենակիցների հավատարմությունը և նրանում տեսնում վատ մտադրությունների առկայությունը։ Մի խոսքով, իրականում ոչ մի պատճառ և հանցանշան չլինելով, լուրեր են տարածվում, որ իբր հայերը կոտորելու են մահմեդականներին։ Իսկ մյուս կողմից, անցյալում տեղի ունեցած դեպքերի նման, իսլամի սրբություններին չհարգելու ստապատիր հորդորանքներով, լուրեր են տարածում հայերին կոտորելու մասին։ Նման հայտարարությունների նկատմամբ հայերի՝ ինքնապաշտպանությունից բացի այլ ելք չունենալով ինչ-որ միջոցների դիմելը ապստամբության որակավորում է ստանում, որը նույնպես հաստատվում է անցյալում տեղի ունեցած զարհուրելի դեպքերով։

Տարբեր նահանգների կրոնական առաջնորդներից, թեմերից և ընդհանրապես առանձին հայերից պատրիարքարան հասած լուրերը ցույց են տալիս, որ այսօր կրկին միևնույն վտանգավոր իրավիճակն է տիրում հիշյալ նահանգներում։

Մի շարք վայրերում, ինչպես օրինակ, Կ. Պոլսի, Անատոլիայի[9] և Ադանայի կոտորածներին ականատես հայերը, զգուշանում են նկատի ունենալով՝ նույն ողբերգության կրկնվելու հավանականությունը։ Փոխանակ բնակչությանը պարզաբանելու պաշտպանության միջոցների դիմելու հանգամանքը, առանձին պաշտոնյաների կողմից այն մատի փաթաթան է դարձվում։ Իսկ կառավարությունն էլ հայերի նկատմամբ անվստահություն դրսևորելով և տեղի ունեցող դեպքերի նկատմամբ իր սպասողական դիրքորոշումով ընթացք է տալիս հայերի ընդհանուր հալածանքին, որը առավել ամրապնդում է մահմեդական բնակչության կասկածանքը և յուղ է քսում կոտորած սանձազերծողների հացին։ Այնպես որ վտանգը փարատելու փոխարեն առավել բորբոքում են այն։

Ներկա վիճակում անհրաժեշտ է, որ կենտրոնական կառավարությունը զգուշացնի պաշտոնյաներին և բնակչությանը։ Օրինակի համար մի ընդհանուր հայտարարության հրապարակումով, առանց տարակուսանքի նշվի հայ ժողովրդի օսմանյան հայրենիքի հանդեպ ունեցած հավատարմության և աշխատասիրության մասին։

Այսպիսի տագնապալի ժամանակում անհրաժեշտ է չափազանց զգույշ դործել և անուշադրության չմատնել նման ապիկար պաշտոնյաներից ձերբազատվելու խնդիրը։ Բոլորին հայտնի է, թե վերջերս թուրքական մամուլի ծանուցումները ինչպիսի իրավիճակ ստեղծեցին հատկապես Ադանայում և Բիթլիսի նահանգներում։

Հայերի դեմ ուղղված այս հալածանքները կանխելու միակ միջոցը, օրենքի համապատասխան հոդվածների կիրառումն է, և նման խառնակիչների խստադույն պատժումը։ Անցյալի օրինակը ցույց է տալիս, որ նման արտառոց իրադրության առկայությունը ձեռնտու է միմիայն ավազակներին, որոնք, օգտվելով բնակչության համար ստեղծված այս ծանր կացությունից, զբաղվում են կողոպուտով և այլ խայտառակ արարքներով։ Ըստ Անատոլիայի վիլայեթներից հասնող լուրերի, իբր թե ավազակության մոլեգնումը համարյա թե հանդարտվել է, այնինչ, իրականում, նոր ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ ավազակների կատարած արարքները մնում են անպատիժ, որը և առավել շփացնում է նրանց։

Կառավարությանը ուղղված այսքան հիշեցումներից, առաջարկություններից, հայերի տրտունջքներից և պաղատանքներից հետո, եթե կոտորած տեղի ունենա, ապա դրանում ակնհայտ է դառնում այդ խնդրի թողտվությունը, և օրենքի համաձայն դա համարվում է ոճրագործություններին դիտումնավոր դյուրություն և օժանդակություն ցուցաբերել։ Ուստի անհրաժեշտ է մի պաշտոնական հայտարարություն հրապարակել և որպես հանցագործության մեղսակից պատժել այն պաշտոնյաներին[11], որոնց պարտականության մեջ է մտնում անդորրի ապահովումը։ Ամենակարևոր խնդիրը, դա անձի անվտանգության պաշտպանությունն է, սակայն կենտրոնական կառավարությունը այդ ուղղությամբ դեռևս մի գործնական քայլ չի ձեռնարկել։ Ըստ մամուլի հաղորդագրության, միակ նախաձեռնությունը, որ այս անգամ կառավարությունը ձեռնարկեց, դա Ռումելիից[12] վերադարձող ժանդարմներին դեպի հայաբնակ նահանգներ ուղարկելն էր։ Մինչդեռ, Ռումելիում այդ ողբերգական դեպքերի զգացմունքային խորը ազդեցության տակ գտնվող ժանդարմներին առանց կարգապահական վիճակը ամրացնելու միանգամից Անատոլիա ուղարկելը, չէր կարող ապահովել կացության կարգավորումը։ Այս պարագան հաստատվում է Հաճընում տեղի ունեցած հայտնի դեպքերով։ Ադանայի դաժան ողբերգության ամենածանր էջը,

դա պաշտոնյաների նախաձեռնությամբ իբր անդորրը վերահաստատելու համար Ռումելիից բերված զինվորական միավորումների առաջ բերած իրադրությունն էր։

Ինչպես Ձերդ վսեմ եպարգոսությանն էլ հայտնի է, հայերով բնակեցված նահանգներում շարունակվող անապահովությունից բացի, այսօր մի նոր վտանգ էլ է սպառնում նրանց։ Այսինքն՝ հայ ժողովուրդը այս ներկա վտանգավոր վիճակից դժգոհելով հանդերձ, երբ խնդրառու է բարեփոխության գործադրության նկատմամբ, գտնվում է պաշտոնյաների սպառնալիքի ենթման տակ...[14]: Մյուս կողմից ուժասպառ և հուսաբեկ բնակչությունը, նկատելով այս, ձգտում է նախկին իրավիճակի վերականգման, բայց առանց կորցնելու հույսը բարեփոխության հանդեպ։

Ներկայումս խոնարհաբար ծառայելով Աստծուն, վսեմ վեհապետության հանդեպ աղոթողիս պարտականությունն է, գթություն հայցելով պայծառափայլ եպարդոսությունից Ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալի վրա։

Օսմանյան կայսրության ամենաաշխատասեր և օրինակելի ազգը համարվող հայ ժողովրդին այս վտանգներից ազատվելու խնդիրը բխում է պետության շահերից և մտնում է կառավարության պարտականության մեջ։ Հայերով բնակեցված նահանգներում իսկական և հիմնական, ինչպես նաև բոլոր տատանումներից զերծ պահելու համար բարեփոխության անհրաժեշտությունը և գործադրումը պետք է լինի վսեմ կառավարության ուշադրության կենտրոնում։

Չնայած, որ տվյալ բարեփոխության մասին կան այլ մեկնաբանություն տվողներ ևս, սակայն, իրականում այդ բարեփոխությունից օգտվելու են հիշյալ նահանգների բոլոր բնակիչները հավասարապես։

Հետևաբար, նվաստս աղերսում է շուտափույթ կերպով միջոցներ ձեռնարկել իր ժողովրդի նյութական և բարոյական ապահովության խնդրում։ Այս հարցում...[15]

ABOUT THE OFFICIAL DOCUMENT DIRECTED TO THE SUBLIME PORTE, ON THE EVE OF THE 1915 GENOCIDE BY THE ARMENIAN PATRIARCHY OF CONSTANTINOPLE:

AVETIS PAPAZYAN

Several years ago, when I was searching Krikor Zohrab's archives at the Museum of Art and Literature in Yerevan, a Turkish manuscript, written in Arabic alphabet, attracted my attention. (Krikor Zohrab was a well-known Armenian writer and politician. He was a deputy in the Turkish Parliament (Mejlis) in 1908—1915). It was an official letter written by the patriarchy of Constantinople, which was directed to the Sublime Porte of the Ottoman Empire.

It consisted of seven pages. There were some corrections in the margins by Krikor Zohrab, a remark at the end, and his signature.

Krikor Zohrab had a great skill with the Ottoman language and he always edited the letters that were written by the patriarchy and directed to the Turkish Government.

In this letter, Archbishop Zaven D. Yeghiayan brought to the surface many facts regarding the killings of the Armenians and of the plundering of their properties. He demanded from the Grand Vezier, Said Pasha, security and protection of Armenians from the danger of Turkish attacks. He also mentioned precursors of the massacres that occurred in the Armenian provinces of the Ottoman Empire. Furthermore, he requested an immediate end to the policy of persecution and harassment.

This crucial document was translated and equipped with commentary by me.

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Տե՛ս «Նոր օր» եռօրեայ, նոյեմբեր 30, 1994, էջ 11։*

[2] *Բարձրագույն Դուռ, Մեծ վեզիրի պաշտոնատեղին։ Տվյալ ժամանակ Մեծ վեզիրի պաշտոնում էր Սայիդ Հալիմ փաշան (1863—1921)։*

[3] *Նման խնդրագրեր և պաշտոնական գրությունները հաճախակի էին հղվում Բարձրագույն Դռանը հատկապես 1909 թ. Ադանայի կոտորածից հետո։ Ելնելով հայերի օրհասական ձանր վիճակից, Պատրիարքարանը բազմիցս բանավոր և գրավոր բողոքագրեր է հղել Բարձրագույն Դռանը, որտեղ փաստացի տվյալներով հայտնվում էր տեղի ունեցող անարդարությունների, չարաշահումների, կողոպու-*

տի. բռնաբարության, սպանությունների և ընդհանրապես հայերի դեմ նախապատրաստվող զանգվածային կոտորածի մասին։

4 Նկատի ունի սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին (1842—1918)։

5 Տվյալ ժամանակ Կ. Պոլսո պատրիարքն էր Զավեն Արք. Տ. Եղիայանը։

6 Խոսքը վերաբերում է 1908 թ. հունիսի 24-ին երիտթուրքերի կողմից կյանքի կոչված սահմանադրությանը։

7 Պառլամենտ։

8 Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը։

9 Նկատի ունի հայաբնակ նահանգները։

10 Նկատի ունի 1894—96 թթ. Սասունի և հայաբնակ այլ վայրերի կոտորածները, ինչպես նաև 1909 թ. Ադանայի հայության հայտնի կոտորածը։

11 Ըստ կատարված սրբագրության նկատի ունի ոստիկաններին։

12 Թուրքիայի եվրոպական մասի տիրույթների ընդհանուր անվանումը։

13 Բնագրում գրված է չեմիեթ (cemiyet)՝, որը կարելի է թարգմանել նաև կոմիտե։

14 Այստեղ բնագրում կան անընթեռնելի բառեր, որոնք հնարավոր չեղավ վերծանել։

15 Սովորաբար նման պաշտոնական գրությունները ավարտվում են հետևյալ ընդունված ձևով. «Այս հարցում կամքն ու հրամանը նորին վսեմություն սուլթանին է»։